

**Աննա Հակոբյան,  
ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության  
ամբիոնի դոցենտ, փ.գ.թ.  
hakobyanannaphil@gmail.com**

**ՆԵՐՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՐՆԵՐԻ ԿԱՊԸ ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածը վերաբերում է գիտության զարգացման գործընթացում սոցիալական արժեքների ունեցած ազդեցությանը: Հեղինակը զարգացնում է այն տեսակետը, որ ժամանակակից գիտության համատեքստում ներգիտական և սոցիալական արժեքների միջև կապերի իմաստավորումը գիտության զարգացման կարևոր պայման է:

Բանալի բառեր. դասական ճանաչողության տեսություն, արժեքանակային չեզոքություն, ինտերնալիզմ, էքստերնալիզմ, ճանաչողության օբյեկտ և սուբյեկտ:

**Anna Akopyan,  
к.ф.н., доцент кафедры философии и политологии АРГУ**

**СВЯЗЬ ВНУТРИНАУЧНЫХ И СОЦИАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ В КОНТЕКСТЕ  
СОВРЕМЕННОЙ НАУКИ**

В статье рассматривается влияние социальных ценностей на процесс развития науки. Автор развивает мысль о том, что осмысление взаимосвязей между внутринаучными и социальными ценностями в контексте современной науки является важным условием ее развития.

Ключевые слова: Классическая теория познания, аксиологический нейтралитет, интернализм, экстернализм, объект и субъект познания.

**Anna Hakobyan,  
PhD in Philosophy, the Chair of Philosophy and Political Science of ASU**

**THE LINK BETWEEN INTRA-SCIENTIFIC AND SOCIAL VALUES IN THE CONTEXT  
OF THE CONTEMPORARY SCIENCE**

The article touches upon the impact of social values on the process of development of science. The author develops the idea that comprehension of the mutual links between intra-scientific and social values in the context of contemporary science is an important condition of development of science.

Keywords: Classical theory of cognition, axiological neutrality, internalism, externalism, object and subject of cognition.

Գիտության զարգացման մեխանիզմների բացահայտմանը միտված ուսումնասիրությունների համար կարևոր է այն հարցը, թե որքանով է հասարակության կողմից որդեգրված մշակութային և աշխարհայացքային արժեքների համակարգը անդրադարձում գիտության զարգացման գործընթացի վրա:

Հայտնի է, որ դասական գիտությունը ի տարբերություն փիլիսոփայության, կրոնի և արվեստի՝ իր կողմից հետազոտվող օբյեկտների նկատմամբ արժեքաճանաչում չեզոք է: Գիտությունը կոչված է բացահայտելու երևույթների էությունը հնարավորինս օբյեկտիվորեն՝ բացառելով հետազոտողի սուբյեկտիվ որակների ու պարամետրերի ազդեցությունը հետազոտության արդյունքների վրա: Գիտական հետազոտության գործընթացում հետազոտողի՝ որպես կոնկրետ հանրության անդամի, կոնկրետ քաղաքակրթական և աշխարհայացքային արժեքների կրողի սուբյեկտիվ բնութագրերի անտեսումը նշանակում է ճանաչողության սուբյեկտի ընկալում՝ որպես արտապատմական, արտամշակութային »մետադիտողի«: Այսինքն՝ հետազոտող սուբյեկտն ընկալվում է որպես իրեն շրջապատող նյութական և հոգևոր իրականության փոխազդեցություններից դուրս գտնվող և դրանց ազդեցություններն իր վրա չկրող բազարձակ անաչառ և չեզոք դիտող:

Դասական իմացաբանության շրջանակներում գիտական ճանաչողությանը բնորոշ արժեքանակային չեզոքության կարևորումն ունի երկու հիմնական պատճառներ:

1. Ճանաչողության դասական տեսությունը հայտնի է որպես «արտագոյման տեսություն»: Այն ձևավորվել է 17-18-րդ դարերում, երբ որպես ճանաչողության հարազույց ընդունված էր ռեպրեզենտացիայի հայեցակարգը: Ինչպես մեկնաբանում է ժամանակակից գիտության տեսաբան Խ.Յ.Չանդկյուլերը՝ ընդհանուր առմամբ ռեպրեզենտացիայի մասին պատկերացումները հանգում են այն գաղափարին, որ գիտելիքը ուսումնասիրվող օբյեկտի կողմից սուբյեկտի վրա ունեցած ազդեցության հետևանք է: Այսինքն՝ սուբյեկտին վերագրվում է պասիվ հայեցողական դիրքորոշում, ընդունվում է, որ օբյեկտների հատկությունները որոնք մեր զգայարանների միջոցով հասանելի են մեր գիտակցությանը՝ լրիվությամբ համապատասխանում են իրերի իսկական դրությանը:

2. Դասական գիտությանը բնորոշ արժեքանակային չեզոքության հիմքում ընկած երկրորդ պատճառը ինտերնալիստական հայեցակարգն է: Այն գիտությունը դիտարկում է որպես հասարակական, տնտեսական, քաղաքական համատեքստից կտրված՝ իր յուրահատուկ ներքին օրինաչափություններով զարգացող իրողություն: Հետևաբար խզվում է սոցիալական և ներգիտական արժեքների կապը:

Գիտության զարգացման ներկա փուլում էապես փոխվել են հետազոտության սուբյեկտ-օբյեկտ փոխազդեցությունների մասին ընկալումները: Ճանաչողության տեսության մեջ ռեպրեզենտացիայի հայեցակարգի հավակնությունները աստիճանաբար ավելի համեստ են դարձել և ի վերջո կանգնել ճգնաժամի առջև: Այժմ այն փոխարինվում է ինտենցիոնալության հայեցակարգով:

Ինտենցիոնալությունը որպես գիտակցության և օբյեկտիվ կեցության միջև հարաբերությունների և գիտելիքի կարգավիճակի մասին էպիստեմոլոգիական հասկացություն առաջին անգամ կիրառել է Ֆենոմենոլոգիայի հիմնադիր Է. Հոլմերը: Ինտենցիոնալությունը գիտակցության ձգտումն է ուղղված ուսումնասիրվող օբյեկտի իմաստի և էության բացահայտմանը: Ընդհանուր առմամբ՝ այս հայեցակարգը հանգում է այն գաղափարին, որ ճանաչողության արդյունքում ճանաչված օբյեկտի տեղ ընդգծվածը՝ իրերի իսկական դրությունը չէ, որը կա բնության մեջ կամ ինքնին: Ընդունվում է, որ ռեպրեզենտացիան պայմանավորված է որոշակի սուբյեկտային նախադրյալներով՝ հասկացական սխեմաներով, դիրքորոշումներով, լեզվով և այլն: Քանի որ դիրքորոշումները կարող են լինել նույնքան բազմազան, որքան ճանաչող սուբյեկտները՝ ուստի հնարավոր չէ ճանաչվող օբյեկտին մասին միանշանակ պատասխան տալ: »Օբյեկտի էության մասին մեկ անգամ ստացված պատկերը չպետք է դիտվի որպես միակ հնարավորը: մեկ այլ ճանաչողական իրադրության, այլ լեզվարին համակարգի դեպքում օբյեկտի պատկերը կարող է բոլորովին այլ լինել:« Այս դեպքում ուշադրությունը սևեռվում է ճանաչողության մեթոդներով և միջոցներով պայմանավորված սահմանափակումներին: Իսկ այդ մեթոդներն ու միջոցները իրենց հերթին պայմանավորված են հետազոտողի՝ որոշակի գիտական դպրոցին պատկանելությամբ, նրա դիրքորոշումներով, նրա որդեգրած ճանաչողական արժեքներով: Ինչպես նշում է Խ. Լեյսին՝ »ճանաչողական արժեքների անտեսման իրավիճակի հաղթահարումը հանգեցրեց սոցիալական և ներգիտական արժեքների կապի իմաստավորմանը«:

Սոցիոլոգիական, մեթոդաբանական և գիտաբանական գրականության մեջ սկսեցին ակտիվ դիսկուսիաներ, բարձրագույնցի մի շարք հիմնահարցեր, որոնք կասկածի տակ են դնում գիտության արժեքաբանական չեզոքության անխոցելիությունը.

- գիտնականների պատասխանատվությունը իրենց կատարած հայտնագործությունների և դրանց կիրառման համար,
- հասարակության մեջ գերիշխող գաղափարախոսությունների ազդեցությունը գիտության զարգացման վրա,
- արժեքային գործոնների դերը գիտական որոնումների և ճանաչողական գործունեության գործընթացում,
- գիտության և իշխանական կառույցների հարաբերությունները և այլն:

Գիտության անդեմ, օբյեկտիվ իդեալի դեմ ընթացում են հատկապես գիտության զարգացման էքստերնալիստական հայեցակարգի ներկայացուցիչները: Մ. Պոլանին նշում է, որ գիտությունը ստեղծում են մարդիկ, հետևաբար ներդրում են արժեքային հարաբերությունների ողջ գունապակը: Պ. Ֆեյերաբենդը, քննադատելով ինտենցիոնալիստական հայեցակարգը, պնդում է, որ գիտելիքի աճը չի կարելի դիտարկել որպես անդեմ գործընթաց հաշվի չառնելով, որ իրականում այն ընթացում է հասարակական-քաղաքական, աշխարհայացքային դիրքորոշումների ուժեղ ազդեցության ներքո, որոնք ձևավորում են գիտնականին իր անձնային, հոգեբանական որակներով, մտքի և տաղանդի առանձնահատկություններով:

Այսպիսով՝ գիտական գործունեությունը իրականացնող արտապատմական կամ արտասոցիալական սուբյեկտ չէ՝ »ինտելեկտուալ Ռ-ոբինզոն« չէ, այլ հասարակական պատմական սուբյեկտ, որևէ կոնկրետ ժամանակաշրջանի գիտական հանրության ներկայացուցիչ ով յուրացնելով որոշակի մեթոդաբանական, աշխարհայացքային և հայեցակարգային արժեքներ, դրանց հիման վրա իրականացնում է իր արդեն անհատական ուսումնասիրությունները: Իհարկե երկար ժամանակ իշխել է այն տեսակետը, թե »ժամանակի շունչը« կարող էր իր կնիքը թողնել միայն հասարակական գիտությունների, հումանիտար ոլորտի և արվեստների վրա, բայց ոչ երբեք բնագիտության (կամ ինչպես ասում են ճշտագիտ գիտության) վրա: Ճշտագիտ գիտությունների արտաժամանակյա էությունը և անկախությունը ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գաղափարների ազդեցությունից պատկերավոր ներկայացրել է Ժ. Գուդսորֆը: »Այն դեպքում, երբ մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներն անպայման կապված են ժամանակի հետ և հանդիսանում են նրա դուստրերը, ճշտագիտ գիտությունները համարվում են բանականության հետ անբարո կապի պտուղներ:« Ժամանակակից գիտության մեջ ընդունված էքստերնալիստական հայեցակարգը հիմնավորում է ոչ միայն հասարակագիտական, այլ և բնագիտական մտքի պատմականությունը:

Գիտության փիլիսոփայության մեջ իրականացվում է գիտելիքի սոցիալականության բնույթի հսկայական ճշտում: Փորձեր են արվում բացահայտելու թե երբ և ինչ ձևերով են հասարակական և պատմամշակութային երևույթները մուտք գործում գիտելիքի բովանդակության մեջ և ազդում ճանաչողական գործունեության ձևերի և միջոցների վրա:

Ժամանակակից գիտական մեթոդաբանությունը միտված է որոնելու և բացահայտելու այնպիսի տրամաբանական մեթոդաբանական միջոցներ, որոնք կարող են բացահայտել հասարակական-պատմական սուբյեկտի ունեցած արժեքային կողմնորոշումների դերը գիտական ճանաչողության մեջ:

Սոցիալական և ներգիտական արժեքների միջև կապերի իմաստավորումը կարող է դառնալ ժամանակակից գիտության զարգացման կարևոր պայման:

### Օգտագործված գրականություն

1. Зандкюлер Х.Й., Репрезентация, или как реальность может быть понята философски.// Вопросы философии, М., 2002, N 9
2. Канке В.А., Философия науки: краткий энциклопедический словарь, М., 2008
3. Лэйси Х., Свободна ли наука от ценностей? Ценности и научное понимание, М., 2001
4. Фейерабенд П., Избранные труды по методологии науки, М., 1986
5. Gudsorfh, l'histoire des sciences a l'histoire de la pansee, Paris ,1977